

«Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի 2014 թ. 9 ամսվա կատարած աշխատանքների հաշվետվություն»

2014 թվականի ընթացքում մարզպետի, մարզպետարանի այլ պաշտոնատար անձանց, կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին պատրաստվել են մամլո հաղորդագրություններ, տեղեկատվական տեղեկանքներ և հաշվետվություններ:

Պետական կառավարման կառույցների, նախարարությունների հետ համագործակցությունը բաժինն իրականացրել է համապատասխան տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների, մամլո ծառայությունների միջոցով:

Լուսաբանվել են քաղաքաշինության, ճանապարհաշինության, կրթության, առողջապահության, համայնքային ծառայության ոլորտներում իրականացվող աշխատանքները, հորեյանական տոնակատարություններին, հանդիսություններին նվիրված միջոցառումները: Օպերատիվ լրատվություն է ապահովվել մարզպետի, մարզպետի տեղակալների, աշխատակազմի ղեկավարի մոտ և վարչություններում տեղի ունեցած խորհրդակցությունների, քաղաքացիների ընդունելությունների վերաբերյալ, ապահովվել է դրանց լուսաբանումը մամուլում:

Ընդհանուր առմամբ, տպագրության են պատրաստվել շուրջ 145 լուր, վերլուծական հոդվածներ, հարցազրույցներ: Դրանք տպագրվել են հանրապետական և մարզային զանգվածային լրատվամիջոցներում, տեղադրվել են մարզպետարանի ինտերնետային էջում: Համագործակցություն է եղել նաև հանրային հեռուստատեսության տարբեր ծրագրերի հետ: Լույս են տեսել հետեյալ թերթերը՝ «Կանթեղ»-8, «Արագած աշխարհ»-8, «Թալին աշխարհ»-10, 11Դարձ,,-9 համար:

Պատրաստվել են պարտադիր հրապարակման ենթակա նյութերը, որոնց մեջ ընդգրկվել են մարզպետարանի հաստիքացուցակը և պաշտոնատար անձանց տվյալները, հեռախոսահամարները, աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերը, բյուջեն, գրավոր հարցումների ձևերը, քաղաքացիների ընդունելության կարգը և այլն:

Արագածոտնի մարզխորհրդի նիստերը լուսաբանվել են «տարածքային կառավարման նախարարության կողմից կազմված մեթոդաբանության համաձայն: Նիստերի օրակարգի և կայացման, մասին տեղեկատվությունը սահմանված կարգի համաձայն ներկայացվել է «տարածքային կառավարման նախարարություն, տեղադրվել է ինտերնետային կայքում, փակցվել մարզպետարանի Տեղեկատվական տախտակում: Այդ մասին ժամանակին իրազեկվել են մարզային, հանրապետական լրատվամիջոցները:

Մարզպետարանի Aragatsotn.gov.am կայքում տեղադրված են մարզպետարանի աշխատանքային ծրագիրը, մարզպետի և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները: Առանձին բաժնում ներկայացված են համայնքապետարանների գործունեությունը,

եռամսյակը մեկ անգամ նրանց կողմից ներկայացվող հաշվետվությունները, ինչպես նաև մարզի և համայնքների բյուջեների կատարման ընթացքը: Կայքէջում տեղադրված է մարզի զարգացման քառամյա ծրագիրը:

Արագածոտնի մարզպետարանի կայքէջի իրավական ակտեր բաժնում տեղադրվում և պարբերաբար թարմացվում են մարզպետի բոլոր որոշումներն ու կարգադրությունները, աշխատակազմի ղեկավարի հրամանները, համայնքապետերի, ավագանիների նիստերի որոշումները:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ համայնքներն, ընդհանուր առմամբ, ունեն տեղեկատվական ցուցատախտակներ, ուր հիմնականում համայնքապետարանի գործունեությանը վերաբերող հայտարարություններից բացի տեղադրվում են ավագանիների և համայնքապետի որոշումները:

Տեղեկատվության և հասարակայնության հետ
կապերի բաժնի պետ

Սաթենիկ Զորյան